ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ք.Գավառ «23» հուլիսի 2020թ.

ժամը 11:00-ին

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Կ.Մանուկյան, Ա.Բադալյան,

Քարտուղար՝ Ս.Մելքոնյան

<u>ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի մասին</u>

Գ.Բոշյան

1) 2020 թվականի հուլիսի 23-ին հրավիրված ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով բաց մրցույթի բանակցություններին ներկայացել են «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ը և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ը /«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է, որ չի մասնակցելու բանակցություններին և ներկայացրել է իր կողմից հաստատված գնային առաջարկը, նշելով որ այն ենթակա չի փոփոխման և armeps էլեկտրոնային համակարգում կցված հավելված 2-ը ընդունել որպես վերջնական տարբերակ/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Բանակցությունների արդյունքում «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն նշել է, որ գների նվազեցում չի կատարում, իսկ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն ներկայացրել է նոր գնային առաջարկ, այն է՝

N	Մասնակցի անվանումը	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1	«Քյավառ Սերվիս» ՍՊԸ	*Բուռնազյան փողոցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ*	195 508 977	19 550 898	43 011 975	258 071 850
1	«Գավառի ՃՇՇ» ԲԲԸ		208333333,33	-	41666666,67	250000000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2.1) «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է՝
Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

2.2) «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում՝
Հրավերով սահմանված՝ հայտերի կազմման, ներկայացման և ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետը և սույն թվականի հունիսի 3-ին ԳՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերի փաթեթի 1-ին մասի 5.1 կետը՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝
Մերժել «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը,
1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) **Գնահատող հանձնաժողովը որոշեց՝** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Անգործության ավարտից հետո 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) **Գնահատող հանձնաժողովը որոշեց**
Գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12, 2-րդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲԱԴԱԼՅԱՆ
		Կ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ